Պարույր Սևակ

Հավերժ երեխա

Мне не к лицу и не по летам!

А.С. Пушкин

Անձիս, տարիքիս վայել չէ, գիտե՛մ...

Ինձ պետք է հիմա հոնքերը կիտել,

Ինձ պետք է հիմա կարգին լրջանալ,

Ինձ պետք է հիմա...

պետք է հազար բան,

Իսկ ես՝ հիմարս, ես՝ անուղղելիս,

Խելքս տվել եմ թովչանքիդ էլի

Ու բռնել քեզ հետ խենթության ճամփան:

«Կյանք չի՛ հասկանում»,- լսում եմ անվերջ...

«Ե՞րբ պիտի ախր դուրս գա մարդամեջ»...

«Ե՞րբ պիտի ախր հասնի սա դիրքի»...

«Ե՞րբ պիտի կյանքը հասկանա կարգին»...

Եվ այս ամենը՝ նորից իմ մասին:

Իսկ դու... խնդո՞ւմ ես, իմ լա՛վ, իմ անսի՛րտ:

Խնդում ես, այո՛, սակայն ո՞ւմ վրա:

Եվ քո կարծիքով սխա՞լ են նրանք:

Գիտե՛մ, ուզում ես դու նրանց ասել,

Որ ես մի անհաս դիրքի եմ հասել.

Որ դու աշխարհ ես մի կախարդական,

Ու ես եմ այնտեղ քո տերն ու արքան.
Որ կյանքը գիտեմ ես հիանալի,
Քանի որ դու ես նրա բանալին.
Եվ ի՞նչ ասել է «դուրս գալ մարդամեջ»,
Երբ ես մարդկանց մեջ քեզ հետ եմ անվերջ.
Եվ ի՞նչ ասել է «ճանապարհ հարթել»,
Երբ քեզ եմ հասել հարթ ճամփով արդեն...
Ասում ես այսքանն ու կանգ ես առնում,
Դու կանգ ես առնում ու ինձ ես նայում,
Ուզում ես տեսնել, թե ես ի՛նչ կասեմ:
Ես քո կարծիքը ինչպե՞ս չկիսեմ,
Երբ որ կիսում եմ քեզ հետ կյանքը իմ,
Ուրախությունը և տանջանքը իմ:
Ես քեզ, անգի՛նս, լավ եմ հասկանում.
Ինձ ոչ մի դեպքում դու չես ցանկանում
Տեսնել ընտանի կենդանի դառած -
Կենդանի մեռած...

15.VII.1953թ.
Նավչալու